# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /2/

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան բնակավայրում տեղի ունեցած հանրային լսում «ԱՍ-նախագիծ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի 20/2 հասցեում կառուցվող նոր դպրոցի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

22.11.2024թ Ապարան բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի 20/2 հասցեում կառուցվող նոր դպրոցի կառուցում:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար տիկին Իդա Թադևոսյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմադրամի բնապահպան Ռուբեն Վարդանյանը, «Աս Նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, տնօրեն՝ Սամվել Սարգսյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. հոկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանում տեղի ունեցավ «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի 20/2 հասցեում կառուցվող նոր դպրոցի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Չնչեց հարց խմելու ջրի բերման աղբյուրի վերաբերյալ, ինչին նախաձեռնողը պատասխանեց, որ ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, դպրոցը սնուցող գծից՝ Գ. Նժդեհի փողոցով անցնող ջրագծից:

Ելույթ ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի բնապահպան Ռուբեն Վարդանյանը, ով ներկայացրեց կատարվող աշխատանքները և թափոնների կուտակման վայրի վերաբերյալ տեղեկատվություն:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչները, նրանք միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ համայնքի մասնակիցները որոշեցին հավանություն տալ «ԱՍ-նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի 20/2 հասցեում նոր դպրոցի կառուցման աշխատանքներին:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան

Նախաձեռնող՝